Ucom x Garni Rave համագործակցության շրջանակներում խաղարկության իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ucom x Garni Rave համագործակցության շրջանակներում խաղարկության (այսուհետ՝ Խաղարկության) իրականացման սույն պայմաններով (այսուհետ՝ Պայմաններ) սահմանվում են Խաղարկության անցկացման կարգը, պայմանները, սահմանափակումները:
1.2. Մասնակցելով Խաղարկությանը՝ Դուք հաստատում եք, որ ծանոթացել եք Պայմաններին և համաձայն եք դրանց:
1.3. Խաղարկությունը համարվում է մարքեթինքային միջոցառում:
1.4. Խաղարկությունն իրականացվում է «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից (այսուհետ՝ Կազմակերպիչ):
1.5. Խաղարկությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

2. Խաղարկության մասնակիցներ

2.1. Խաղարկությանը կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող, 18 տարին լրացած Ֆիզիկական անձինք: 2.2. Կազմակերպչի աշխատակիցները և նրանց ընտանիքի անդամները չեն կարող մասնակցել Խաղարկությանը:

3. Խաղարկության անցկացման կարգը

3.1. Խաղարկությանը մասնակցելու համար անհրաժեշտ է 2026 թվականի հուլիսի 6-ից 2026 թվականի հուլիսի 10-ը (ներառյալ) ընկած ժամանակահատվածում՝

- բաժանորդագրվել Ucom ինստագրամյան էջին (follow),
- հավանել (like) նշված հրապարակումը (like),
- մեկնաբանությունների դաշտում նշել այն անձին ում հետ ցանկանում են մասնակցել Garni Rave փառատոնին :

Նույն օգտահաշվից Խաղարկությանը հնարավոր է մասնակցել **միայն 1 անգամ**:

3.2. Խաղարկությունը կամփոփվի հուլիսի 10-ին: Համապատասխան տեղեկությունը կտեղադրվի նաև Կազմակերպչի պաշտոնական սոցիալական էջում `Ucom-ի ինստագրամյան ալիքում:

3.3. Խաղարկության հաղթողը կընտրվի պատահականության սկզբունքով՝ AppSorteos առցանց հարթակի միջոցով:
3.4. Հաղթողի ընդհանուր թիվը սահմանվում է 1 հոգի: Հաղթողը ստանում է Garni Rave փառատոնի երկուական տոմս:
3.5. Խաղարկության արդյունքների ամփոփման արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցներին Ucom-ի ինստագրամյան պաշտոնական էջից կուղարկվի հաղորդագրություն՝ վերջիններիս հաղթող ճանաչված լինելու, նվերը ստանալու վայրի և ժամանակահատվածի վերաբերյալ:
3.6. Խաղարկության արդյունքների ամփոփման արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցները իրենց նվերները ստանալու համար պետք է անձամբ մոտենան Կազմակերպչի՝ Հյուսիսային պողոտա 1/2 հասցեում գտնվող հաճախորդների սպասարկման գրասենյակ:
3.7. Հաղթող ճանաչված մասնակցի կողմից պետք է ներկայացվի իր ինստագրամյան էջին ստացված նամակը և անձը հաստատող փաստաթուղթ:
3.8. Հաղթող ճանաչված մասնակցի կողմից նվերն անձամբ ստանալու անհնարինության դեպքում, նվերը կարող է ստանալ վերջինիս կողմից պատշաճ լիազորված անձը՝ օրենքով սահմանված կարգով տրամադրված լիազորագրով և անձը հաստատող փաստաթղթով:
3.9. Նվերը ենթակա չէ փոխարինման կամ փոխանակման գումարի հետ:
3.10. Կազմակերպչին իրավունք է վերապահվում փոփոխել Խաղարկության Պայմանները՝ հաշվի առնելով ստեղծված իրադարձությունները՝ դրա մասին նախապես տեղեկացնելով իր պաշտոնական կայքէջում և սոցիալական էջերում:

4. Խաղարկության անցկացման ժամկետները

4.1. Խաղարկությունն անց է կացվելու **2026 թվականի հուլիսի 6 —ից 2026 թվականի հուլիսի 10-ը (ներառյալ)** ընկած ժամանակահատվածում:
4.2. Խաղարկության արդյունքների ամփոփման ժամկետների վերաբերյալ տեղեկությունը կտրամադրվի Պայմանների 3.4-րդ կետով սահմանված կարգով:

5. Նվերների ցանկը

5.1. Նվերների ցանկը հետևյալն է.

Ապրանքատեսակ	Քանակ
Garni Rave փառատոնի երկուական տոմս	1

6. Կազմակերպչի տվյալները

«Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերություն,
գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մանանդյան փող., շ. 33/8,
պաշտոնական կայքէջ՝ www.ucom.am
պաշտոնական սոցիալական էջեր՝
https://www.facebook.com/UcomArmenia
https://www.instagram.com/ucom_official
հեռախոսահամար՝ +374 (11) 444 444